



Դատարան դիմելը

COVID-19 համաճարակի ժամանակ Ավստրալիայի Գերագույն դատարանը, Ավստրալիայի Դաշնային դատարանը, Ավստրալիայի ընտանեկան դատարանը և Ավստրալիայի Դաշնային շրջանային դատարանը դեռ գործում են:

Չնայած նրանք փակել են բոլոր հանրության սպասարկման կետերը և դեմ առ դեմ ծառայությունները, յուրաքանչյուր դատարան միջոցներ է ձեռնարկել դատարանի ներսում ընթացող ներկա դատավարությունների համար: Արտակարգ հանգամանքներում դեմ առ դեմ ծառայություններ կարող են տրամադրվել հեռախոսով նախնական գնահատումից հետո:

Վերջին տեղեկությունների և թարմացումների համար, այցելեք համապատասխան դատարանի կայքը կամ օգտագործեք հետևյալ կապի տվյալները.

- Ավստրալիայի Գերագույն դատարան՝ [High Court of Australia](#) կամ 02 6270 6811
- Ավստրալիայի Դաշնային դատարան՝ [Federal Court of Australia](#) կամ 1300 720 980
- Ավստրալիայի ընտանեկան դատարան՝ [Family Court of Australia](#) կամ 1300 352 000
- Ավստրալիայի Դաշնային շրջանային դատարան՝ [Federal Circuit Court of Australia](#) կամ 1300 720 980

Վարչական բողոքարկման դատարանը նույնպես դեռ գործում է, չնայած նրա տեղական գրանցման բաժինները ներկայումս փակ են: Լրացուցիչ տեղեկությունների համար, այցելեք դատարանի կայք՝ [website](#) կամ զանգահարեք 1800 228 333: